ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկղ-3, շ-12, 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՆԻՍՏ ԹԻՎ 3

14 ապրիլի 2021 թվականի

Սույն թվականի ապրիլի 14-ին տեղի ունեցավ Նորաշեն համայնքի ավագանու նիստը, որին մասնակցում էին համայնքի ավագանու 5 անդամներից 4-ը՝ Ա.Գրիգորյան, Խ.Հակոբյան, Ռ.Սահակյան, Ա.Սարիբեկյան, համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Վ.Դավթյանը: Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գառնիկ Գասպարյանը, քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար՝ Գոռ Մանուկյանի:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.2021 թվականի առաջին եռամսյակի կտրվածքով Նորաշեն համայնքի բյուջեում նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման և կատարված ծախսերի վերաբերյալ հաղորդումներ: / Զեկ.Վ.Դավթյան /

2.Նորաշեն համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին: / Զեկ.Վ.Դավթյան /

3. Համայնքի ավագանու՝ 15.01.2021թ. թիվ 4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: /Զեկ.Գ.Գասպարյան/

4. Նորաշեն համայնքի սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալության տրամադրելու և վարձակալության վճարների չափ սահմանելու մասին: /Զեկ.Գ.Գասպարյան/

5. Համայնքի սեփականություն հանդիսացող օտարվելիք գույքի ցանկը հաստատելու և վաճառքի համար մեկնարկային գին սահմանելու մասին:

/Զեկ.Գ.Գասպարյան/

Արձանագրող.

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկղ-3, շ-12, 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2021 թվականի N 10-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.04.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Նորաշեն համայնքի ավագանու 14.04.2021 թվականի թիվ 3 հերթական նիստի օրակարգը.

1.2021 թվականի առաջին եռամսյակի կտրվածքով Նորաշեն համայնքի բյուջեում նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման և կատարված ծախսերի վերաբերյալ հաղորդումներ: / Զեկ.Վ.Դավթյան /

2.Նորաշեն համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին: / Զեկ.Վ.Դավթյան /

3. Համայնքի ավագանու՝ 15.01.2021թ. թիվ 4-Ա որոշման մեջ փոփոխություն

կատարելու մասին: /Զեկ.Գ.Գասպարյան/

4. Նորաշեն համայնքի սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալության տրամադրելու և վարձակալության վճարների չափ սահմանելու մասին: /Զեկ.Գ.Գասպարյան/

5. Համայնքի սեփականություն հանդիսացող օտարվելիք գույքի ցանկը հաստատելու և վաճառքի համար մեկնարկային գին սահմանելու մասին:

/Զեկ.Գ.Գասպարյան/

Համայնքի ավագանու անդամներ.

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈԼԱՆԴ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Նորաշեն համայնքի ղեկավար ԳԱՌՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկղ-3, շ-12, ☎ 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2021 թվականի N 11-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, «Բյուջետային համակարգի մասին» 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, համայնքի ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն Նորաշեն համայնքի բյուջեի 2021 թվականի առաջին եռամսյակի կատարման մասին հաղորդագրությունը/թիվ 1 հավելվածը կցվում է/:

Ավագանու անդամներ

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈԼԱՆԴ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Նորաշեն համայնքի ղեկավար ԳԱՌՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված 1

Նորաշեն համայնքի ավագանու

14.04.2021թ. N11-Ա որոշման

2021թ.առաջին եռամսյակի կտրվածքով համայնքի վարչական բյուջեի մուտքերը կազմել են 3875.2 հազ. դրամ,նախատեսված 4357.5 հազ.դրամի դիմաց, կատարողականը- 89.0%:

Հողի հարկ՝ 400.0հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 442.6հազ.դրամ՝ 110.6%

Գույքահարկ՝ 300.0հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 720.6 հազ դրամ՝ 240.2%

Տեղական տուրքեր՝ 20.0 հազ. դրամի դիմաց հավաքագրվելէ 0 հազ.դրամ՝ 0%

Հողի վարձավճար՝ 1011.2հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 169.8 հազ.դրամ՝ 16.8%

Աղբահանության վճարներ՝ նախատ. 120.0 հազ.դրամ, հավաքագրվել է 36.0 հազ. դ. 30%

Այլ եկամուտներ՝ նախատեսված- 25.2հազ.դրամ կատարվել է 25.2 հազ.դրամ 100%

Դոտացիա՝2481.1հազ.դրամի դիմաց կատարվել է 2481.1հազ. դրամ՝ 100 %

Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ՝ նախատեսված 1876.4հազ.դրամի դիմաց կատարվել է 1394.2 հազ.դրամ 74.3% :

Ծախսեր՝

1.Աշխատավարձ՝..... 1328.4հազ.դրամ

2.Կապի ծառայություն՝..... 30.0 հազ.դրամ

3.Էներգետիկ ծառայություն՝..... 315.0 հազ.դրամ

4.Տրանսպորտային նյութեր՝..... 211.0 հազ.դրամ

5.մեքենան.և սարքավորումների ձ/բ ... . 353.0 հազ.դրամ

6.Համակարգչային ծառայություններ 3.6հազ.դրամ

7.Հուղարկավորության նպաստներ..... 100.0 հազ.դրամ

8.Բանկային ծառայություններ..... 3.5 հազ.դրամ

9.աղբահանության ծառայություն..... 75.0 հազ.դրամ

10.Գարնասենյակային նյութեր..... 30.0 հազ.դրամ

11.հատուկ նպատակային նյութեր..... 49.3 հազ.դրամ

12. Տեղեկատվ.ծառայություններ..... 18.0հազ.դրամ

Ընդամենը՝ ..... 2516.8 հազ.դրամ:

Նորաշեն համայնքի ղեկավար ԳԱՌՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկդ-3, շ-12, ☎ 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2021 թվականի N12-Ն

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի , «Բյուջետային համակարգի մասին» 33-րդ հոդվածի պահանջները, համայնքի ավագանին որոշում է՝

1. Նորաշեն համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.
ա/Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժին-1, խումբ-6, դաս-1, հոդված 4824 , պետական մակարդակով տույժեր և տուգանքներ, պակասեցնել 1034.9 հազ.դրամով և հաստատել 0 դրամ:
բ/վարչական բյուջեի ՝ պահուստային միջոցներ բաժին 11, խումբ-1, դաս-2, հոդված - 4891, պակասեցնել 477.9 հազ դրամով և հաստատել 1708.9 հազ.դրամ:
գ/ գ/պ ապարատի պահպանում բաժին 01 խումբ 1 դաս-1 ծրագիր -5 հոդված 4111 /աշխատավարձ / ավելացնել 1112.8հազ. դրամով և հաստատել 9119.0 հազ.դրամ:
դ/ գ/պ ապարատի պահպանում բաժին 01 խումբ 1 դաս-1 ծրագիր -5 հոդված 4264 /տրանսպորտային նյութեր / ավելացնել 100.0հազ. դրամով և հաստատել 960.0 հազ.դրամ:
ե/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժին-1, խումբ-6, դաս-1, հոդված 4251 , /շենքերի և կառույցների նորոգում/ ավելացնել 300.0հազ.դրամով և հաստատել 300.0հազ.դրամ:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈԼԱՆԴ ՍԱՀԱԿԱՅՆ
ԱՐԿԱԴԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Նորաշեն համայնքի ղեկավար ԳԱՌՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկղ-3, շ-12, ☎ 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2021 թվականի N13-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 15.01.2021 ԹՎԱԿԱՆԻ N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերը 20% -ով բարձրացնելու մասին, պայմանավորված երկրում սոցիալական-տնտեսական ճգնաժամի պատճառով առաջացած ֆինանսական խնդիրների համահարթեցմամբ, կենսական և առաջին անհրաժեշտության ապրանքների գների զգալի թանկացմամբ, համայնքի ավագանին որոշում է՝

1.Փոփոխություն կատարել համայնքի ավագանու՝ 15.01.2021 թվականի N 4-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակում և հաստատել Նորաշենի համայնքապետարանի 2021 թվականի նոր հաստիքացուցակը՝ համաձայն կից հավելվածի:

2. ՈՒժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու՝ 15.01.2021 թվականի N 4-Ա որոշումով հաստատված հաստիքացուցակը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021 թվականի ապրիլի 1-ից:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈԼԱՆԴ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Նորաշեն համայնքի ղեկավար ԳԱՌՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Նորաշեն համայնքի ավագանու՝

14.04.2021թ. թիվ 13-Ա որոշման

Նորաշեն համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների փոփոխված պաշտոնային դրույքաչափերը

Պաշտ.անվանումը	Հաստիքային միավորը / քանակը /	Պաշտոնային դրույքաչափը / գումար /	Բարձր լեռնային չափը / գումար /	Ընդամենը չափը /գումար/
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
Համայնքի ղեկավար	1	229240	8000	2728260
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	174520	8000	2098980
Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1-1	1	153040	8000	1851960
Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1-2	1	153040	8000	1851960
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
Հավաքարար	0.5	42000	4000	552000
Ընդամենը	4.5	751840	36000	908316

Նորաշեն համայնքի ղեկավար Գ.Գասպարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկղ-3, շ-12, ☎ 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2021 թվականի N14-Ա

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջները, համայնքի ավագանին որոշում է.

1.Նորաշեն համայնքի սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նշանակության հողերից.

ա/ 9.04 հա վարելահող մրցույթային կարգով տրամադրել վարձակալության՝ 1 հեկտարի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 4000 /չորս հազար / ՀՀ դրամ:

բ/ 670.47 հա արոտներ մրցույթային կարգով տրամադրել վարձակալության՝ 1 հեկտարի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար / ՀՀ դրամ:

2.Համայնքապետարանի աշխատակազմին.

ա/ Ապահովել համայնքի ավագանու որոշման հրապարակայնությունը համապատասխան հայտարարություններով:

բ/ Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասերի վարձակալության տրամադրման մրցույթը:

Կողմ-4 **Դեմ-0** **Ձեռնպահ-0**

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈԼԱՆԴ ՍԱՀԱԿԱՅՆ

ԱՐԿԱԴԻ ՍԱՐԻԲԵԿՅՆ

Նորաշեն համայնքի ղեկավար ԳԱՌՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկղ-3, շ-12, 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2021 թվականի N 15-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՏԱՐՎԵԼԻՔ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով՝ ՀՀ «Հողային օրենսգրքի » հոդված `67, կետ-2, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հ Հաստատել Նորաշեն համայնքի սեփականություն հանդիսացող՝ օտարվելիք գույքի ցանկը.

1/ բնակավայրի հասարակական կառուցապատման հողամաս՝ 0.12422 հա, ծածկագիր՝ 05-070-0104, հասցեն՝ գ.Նորաշեն, փողոց-1, թիվ 1/8

2/ բնակավայրի բնակելի կառուցապատման հողամաս՝ 0.15364 հա, ծածկագիր՝ 05-070-0104-0015, հասցեն՝ գ.Նորաշեն, փողոց-1, թիվ 3/1

3/ բնակավայրի բնակելի կառուցապատման հողամաս՝ 0.14973 հա, ծածկագիր՝ 05-070-0104-0016 , հասցեն՝ գ.Նորաշեն, փողոց-1, թիվ 3/2

4/ բնակավայրի բնակելի կառուցապատման հողամաս՝ 0.237հա, ծածկագիր՝ 05-070-0104-0012, հասցեն՝ գ.Նորաշեն, փողոց-1, թիվ 3/11

5/ բնակավայրի հասարակական կառուցապատման հողամաս՝ 0.10345 հա, ծածկագիր՝ 05-070-0163- 0003, հասցեն՝ գ.Նորաշեն, փողոց-1, հող-2/3

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմին ապահովել սույն որոշմամբ հաստատված օտարման ենթակա գույքացանկի հրապարակայնությունը:

3.Սույն որոշման 1-ն կետով հաստատված՝ օտարման ենթակա գույքի ցանկում ներառված հողակտորները՝ բնակավայրի հասարակական կառուցապատման հողամաս՝ 0.12422 հա, ծածկագիր՝ 05-070-0104, հասցեն՝ գ.Նորաշեն, փողոց-1, թիվ 1/8, բնակավայրի բնակելի կառուցապատման հողամաս՝ 0.15364 հա, ծածկագիր՝ 05-070-0104-0015, հասցեն՝ գ.Նորաշեն, փողոց-1, թիվ 3/1, բնակավայրի բնակելի կառուցապատման հողամաս՝ 0.14973 հա, ծածկագիր՝ 05-070-0104-0016 , հասցեն՝ գ.Նորաշեն, փողոց-1, թիվ 3/2, բնակավայրի բնակելի կառուցապատման հողամաս՝ 0.237հա, ծածկագիր՝05-070-0104-0012, հասցեն՝ գ.Նորաշեն, փողոց-1, թիվ 3/11, բնակավայրի հասարակական կառուցապատման հողամաս՝ 0.10345 հա, ծածկագիր՝ 05-070-0163- 0003, հասցեն՝ գ.Նորաշեն, փողոց-1, հող-2/3 աճուրդ վաճառքով օտարել:
Վաճառվող հողամասերի 1քմ-ի համար մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 %- ի չափով՝ 514.8 /հինգ հարյուր տասնչորս դրամ ութսուն լումա / ՀՀ դրամ:
4.Աճուրդի կազմակերպիչ համայնքի ղեկավար Գառնիկ Գասպարյանին. օրենքով սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել հողամասերի աճուրդ-վաճառքը:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈԼԱՆԴ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Նորաշեն համայնքի ղեկավար ԳԱՌՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ